« Լավ գաղափարները վերածել սթարթ-ափների» 2023 տարածաշրջանային մրցույթի երկրորդ թողարկումը կընթանա երեք փուլով.

- 1-ին փուլ - Դիմումների ընդունման տարածաշրջանային հրավերի շրջանակներում ՖՀԳ ԿԱԵ-ի գրասենյակի անդամ բուհերի ֆրանսախոս ուսանողների միջավայրում գտնել համապատասխան, նոր և եզակի գաղափար՝ թիմով ներկայացնելու համար ոչ ուշ, քան 2023 թ. մայիսի 16-ը:

- **Ուղարկել առաջարկ**. նորարարական երիտասարդ ձեռնարկություն ստեղծելու գաղափարի մի քանի տողից (500 բառ/մեկ էջ) բաղկացած ամփոփում՝ հատկապես նորագույն տեխնոլոգիաների ոլորտում: Դա կարող է լինել միաժամանակ տեխնոլոգիական սթարթ-ափ, ինչպես նաև տեխնոլոգիան այլ ոլորտների հետ համակցելու հնարավորություն՝ նոր ծառայություններ կամ արտադրանք առաջարկելու նպատակով (օր.՝ համակցել «ֆինանսները» և «տեխնոլոգիան»). մի նորարարական սթարթ-ափ, որը կօգտագործի տեխնոլոգիան ֆինանսական և բանկային ծառայությունների ոլորտներում: Մրցույթը վերաբերում է կրթական բոլոր բնագավառներին:

- **Ձևավորել թիմը**. բազմամասնագիտական թիմը, որը պետք է բաղկացած լինի առավելագույնը 4 ֆրանսախոս ուսանողից, կարող է ներկայացնել մեկ փաթեթ/հայտ սույն մրցույթի շրջանակներում: Ուսանողները խմբերը կարող են կազմել ազատ կերպով:

-2-րդ փուլ. մասանգիտական ոլորտի ներկայացուցիչները թիմերին / ուսանողներին կաջակցեն իրենց տեխնոլոգիական սթարթ-ափի կառուցման գործում հունիս ամսվա ընթացքում շաբաթական 2 սեանս, կամ հունիս և հուլիս ամիսներին՝ շաբաթական մեկ սեանս:

-3-րդ փուլ, վերջնական փուլ. մրցույթի ամփոփումը տեղի կունենա Բուխարեստում՝ **օգոստոսի 28-ից սեպտեմբերի 1-ը**՝ 5 օրյա վերապատրաստումներով և մասնագիտական խորհրդատվությամբ (coaching): Ամփոփման շրջանակներում տարածաշրջանային լավագույն նախագծերը կներկայացվեն ժյուրիին Բուխարեստում:

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Թեկնածության փաթեթը պետք է լրացվի և վավերացվի մինչև **2023 թ. մայիսի 16-ը.**

- հայտերի ներկայացում՝ **2023 թ. ապրիլի 13-ից մինչև 2023 թ. մայիսի 16-ը,**
- նախընտրական արդյունքների հրապարակում՝ **2023 թ. մայիսի 22-ը,**
- մասնագիտական խորհրդատվության և աջակցության առցանց հանդիպումների կազմակերպում՝ 2023թ. հունիսի 6-ից հուլիս,
- ամփոփիչ փուլ Բուխարեստում՝ **օգոստոսի 28-ից սեպտեմբերի 1-ը** (ամսաթիվը կհստակեցվի ավելի ուշ)